Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման
Հավելված
N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի N 11-Ա որոշման առ 08.01.2024թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Վահան Քերոբյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2024 թվականի հունվարի 9-11-ը**

5. Գործուղման վայրը՝ Հնդկաստանի Հանրապետության **(Գուջարաթ)**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[redacted] ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Վահան Քերոբյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**362,000**	**362,000**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USA)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)	53	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	21,079	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	**63,236**	**63,236**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (դրամ)		**425,236**	**425,236**

*12.01.2024թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1USD=405.35 դրամ

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հունվարի 10-11-ը ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի՝ Հնդկաստանի Գուջարաթ նահանգում կայանալիք 10-րդ «Կենսունակ Գուջարաթ» համաշխարհային գագաթնաժողովին (Vibrant Guiarat Global Summit 2023) գործուղման արդյունքների մասին:

1. Անունը, ազգանունը՝

Վահան Քերոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք. Գանդինագար, Գուջարաթ նահանգ, Հնդկաստան 2024թ. հունվարի 10-11-ը

4. Հրավիրող կողմը՝

Հնդկաստանի կառավարություն

5. Գործուղման նպատակը՝

- Մասնակցություն Հնդկաստանի Գուջարաթ նահանգում կայանալիք 10-րդ «Կենսունակ Գուջարաթ» համաշխարհային գագաթնաժողովին:
- Երկկողմ համագործակցությանն առնչվող մի շարք հարցերի քննարկում:

6. Քննարկված թեմաները՝

- Քննարկվել են հայ-հնդկական առևտրային կապերի ամրապնդմանը, արդյունաբերության ոլորտում փոխգործակցության ընդլայնմանը վերաբերող հարցեր:
- Քննարկվել են երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալների ավելացմանը, լոգիստիկ ենթակառուցվածքների ընդլայնմանը, Հնդկաստան-Իրան-Հայաստան առևտրային կապուղիներին վերաբերող մի շարք հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ս/թ հունվարի 10-ին Վահան Քերոբյանը բացման խոսքով ելույթ է ունեցել Հնդկաստանի Գուջարաթ նահանգում անցկացվող 10-րդ «Կենսունակ Գուջարաթ» համաշխարհային գագաթնաժողովի հիմնական նիստում:

Հունվարի 10-ին հանդիպում է ունեցել Հնդկաստանի առևտրի և արդյունաբերության նախարար Պիյուշ Գոյալի հետ: Քննարկվել են Հայաստանի և Հնդկաստանի միջև առևտրային կապերի ամրապնդմանը, արդյունաբերության ոլորտում փոխգործակցության ընդլայնմանը վերաբերող հարցեր:

Հունվարի 11-ին հանդիպում է ունեցել Հնդկաստանի նավահանգիստների, նավագնացության և ջրային ուղիների նախարար Սարբանանդա Սոնովալի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալների ավելացմանը, լոգիստիկ ենթակառուցվածքների ընդլայնմանը, Հնդկաստան-Իրան-Հայաստան առևտրային կապուղիներին վերաբերող մի շարք հարցեր: Նախարարը նաև ներկայացրել է Գյումրիի «չոր նավահանգստի» նախագիծը և առաջարկել է հնդկական կողմին դիտարկել այդ նախագծում հնդկական ընկերությունների ներգրավման հնարավորությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

- Հնդկաստան կատարած այցի շրջանակում նախարար Վահան Քերոբյանը և Հնդկաստանի նավահանգիստների, նավագնացության և ջրային ուղիների նախարար Սարբանանդա Սոնովալը բանավոր պայմանավորվածություն են ձեռք բերել այն մասին որ ս/թ մայիսին եռակողմ (Հայաստան-Իրան-Հնդկաստան) հանդիպման վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը